ոպաստ ամանգակություն, ամփոփված անձնատուր է լինում Հալեպի ամիրային։ Մանրամասն նկարագրված են նրա համառ ջանքերն ու թափած ճիգերը Կիլիկիայի թագավորությունը վերականգնելու գործում։

Լևոն Ե Լուսինյանի մահից հետո (1393 թ.) Հայոց թագավորի անվանական տիտղոսը անցնում է Կիպրոսի Լուսինյան թագավորներին և «Հայոց թագավորությունը» շարունակվում է մինչև 1510 թ.։ Այնուհետև թվարկված են առաջ արշավողներն ու իշխողները։

Երկրորդ մասում ուսումնասիրության նյութ են դարձել հայ-հռոմեական հարաբերությունները, հիմնականում Ֆլորենցիայի կրոնական ժողովը և պաշտոնական թղթակցությունները Հռոմի հետ։

Գրքի երրորդ մասը վերնագրված է «Հայերու ներքին կյանքը» (էջ 61—71)։ Այստեղ շատ համառոտակի խոսվում է շինարարական աշխատանքների, գրական ստեղծագործությունների և կրոնական երևույթների մասին, որոնք շարունակվել են Կիլիկյան թագավորության անկումից հետո։

Գրքի 73—95 էջերում համեմատաբար ձևով տպագրված է «Հրովարտակ միաբանական միության Հայոց ընդ սրբո Հռոմեական եկեղեցվո...» փաստաթուղթը, որը 1439 թ. տրվել է Եվգենիոս պապին։

Այս հրատարակության վերջում տպագրված են կաթողիկոսների ժամանակագրական ցուցակը, 150-ից ավելի ծանոթագրություններ և մատենագիտական ցանկը։ Գրքի առաջաբանում դոկտ. Հ. Տեր-Ղազարյանը գրում է, որ այս աշխատությունը «կրերի նորություններ Կիլիկիո պատմության քիչ թե շատ մութ մնացած կետերու մասին»։

Հ. ՄԻՔԻՐՅԱՆ

ՄԻ ԻԼՅՈՒՍՏՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Շահամիր Շահամիրյանի հայտնի «Գիրք անուանեալ որոգայթ փառաց» (1773 թ.) քաղաքական-հրապարակախոսական երկը բացվում է մի նկարով, որ ներկայացնում է Ռոբինզոն Կրուզոյին։ Ամբողջ նկարը հագեցած է անզորրավետ մթնոլորտով, որ գալիս է Ռոբինզոնի անվրդով զբաղմունքից և բնության ճոխությունից։ Ռոբինզոնը ուլերը քշում է ցանկապատված պատսպարանից ներս, նրա գլխի վերև թռչուններն են ճախրում ազատ երկնքում, իսկ նկարի խորքում անտառն է՝ բյուր բարիքներ խոստացող շքեղությամբ։ Անտառի փեշին աչքի են զարնում ռոբինզոնյան բնակարանները և այլ կից հարմարությունները։ Նկարը խոսում է մարդու և բնության համերաշխ համակեցության մասին. մարդը ստեղծել է իր ապահով ու խաղաղ կյանքի հնարավորությունները, իսկ բնությունն էլ, կարծես, շռայլում է մարդու այդ երջանկությունից։

Առաջին պահ տարօրինակ է թվում Ռոբինզոնի ներկայությունը «Որոգայթ փառաց»-ի մուտքին, բայց Շահամիրյանի երկը, նրա գաղափարական նպատակաուղղվածությունը փարատում են ամեն մի տարակուսանք։

Շահամիրյանը հայ ազատագրական շարժման հայտնի գաղափարախոսներից էր և իր ողջ գործունեությամբ ձգտում էր, որ Հայաստանը ազատագրվի թուրքական ու պարսկական լծից և ռուսական հովանավորությամբ հաստատի անկախություն։ Իր «Որոգայթ փառաց»-ում նա նույնիսկ նախանշում էր ապագա Հայաստանի վարչակարգը, մանրամասնորեն շարադրում պետական կառուցվածքի իր դրույթները։

Հայ ժողովրդի պատմության վրա արված հետադարձ թռուցիկ հայացքով նա հանգում է այն հետևության, որ չար ու անմիտ տիրակալները «իջուցին մեզ ի պատուոյ և երջանկութենէ ազատութեան մինչև ի խոնարհ, և վասն միայնոյ այս մեղաց ոչ միայն խոնարհ մեզ արարին յոյժ. այլ գերի այլ ազգաց. նախատինք մարդկանց և արհամարհանք տեսողաց մերոց»[1]։ Այդ բոլորից հետո Շահամիրյանը հիմնավորում ու պատճառաբանում է այն նոր ուղին, որը սալահատակված է լուսավորական ազատախոհ գաղափարներով։ Գլխավորն այստեղ մարդու բնական վիճակի նկատառումն է։ Մարդու այդ գրությունը դիտվում է միակ բանականը, և բանականությունն էլ գլխավոր դատավորն է՝ հասարակական վերակառուցումները հիմնավորելիս։ Տարիներ անց, երբ Շահամիրյանը ձգտում էր իր ծրագրումների գործնական իրականացմանը հասնել, «Որոգայթ փառաց»-ը գնահատում էր գաղափարական այդ դիրքորոշումով։ «Տետրակն անուանեալ «Որոգայթ փառաց»,— գրում էր նա վրաց Հերակլ Երկրորդ թագավորին, 1787 թ. հոկտեմբերի 15-ին,— շարադրեալ վասն ազատութեան ազգին հայոց, ցնծութեամբ ընծայեցի ի սպաս, որում ինքն ցուցանէ կացութիւնն օրինաց իւրոց, բոլորովին ըստ համեմատութեան

[1] Շ. Շահամիրյան, Գիրք անուանեալ որոգայթ փառաց, Մադրաս, 1773, էջ 14։

բնական բնութեան մարդոյ, և բան արժանաւորութեան բանական հոգւոյ...»[2]։

Լուսավորիչ Շ. Շահամիրյանը համոզված էր, որ բանական հիմունքներով կերտված հասարակարգում ակնկալվող գալիքը «յոյժ բարի վասն մեր և վասն աշխարհին մերոյ լիցի, զի ազգն հայոց ամենեքեան ազատապէս բնական բնութեամբ իւրեանց քաղաւորեսցեն ի վերայ տանն իւրեանց, բառնալով խէթ և նախանձ և ժլատութիւնք. զի ոչ գոցի ոմն մեծ և ոմն փոքրիկ, ամենեքեան հաւասարապէս ստանայցեն շուք քաղաւորութեան ի ժամու ծնեղեան իւրեանց, և քաղաւոր կացցեն ամէն աւուրս կենաց իւրեանց ի վերայ սեպհական աշխարհին իւրեանց մինչև յաւիտեան»[3]։

Գագափարական այս հիմնադրույթի դեպքում բոլորովին պատահական չէ Ռոբինզոնի երևույթը «Որոգայթ փառաց»-ի մեջ։ Նա Շահամիրյանի համար իլյուստրատիվ միջոց է ծառայել կոնկրետացնելու, տեսողական ժառանգելիության հաստատելու իր քարոզած ապագան, որը հիմնված էր լինելու անհատի օրենական դրությանս սկզբունքի վրա։ Դեֆոյի հանրածանոթ հերոսի մեջ Շահամիրյանը չէր դժվարանում տեսնել իր պատկերացումների յուրահատուկ մարմնավորումը։

Վ. ՓԱՐՊԱՄՅԱՆ

2 Ս. Երիցյան, Հակոբ Շահամիրյանցի մատենագրական գործունեությունը Հնդկաստանում, Թիֆլիս, 1981, էջ 28։

3 Շ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, էջ 14։